ԿԱՐԾԻՔ

Արփինե Դավիթի Սարգսյանի «ՀՀ տնտեսության մրցունակության բարելավման հիմնախնդիրները ինտեգրացիոն գործընթացների պայմաններում» թեմայով Ը.00.01.- «Տնտեսագիտության տեսություն և տնտեսագիտական մտքի պատմություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ցանկացած երկրի համար իր տնտեսական ռեսուրսների արդյունավետ համակցումն ու կառավարումը, դրա հիման վրա մրցակցային առավելությունների ստեղծումն ու իրացումը առաջնահերթ խնդիր է: Թերևս միայն այս կերպ է հնարավոր ապահովել համաշխարհային տնտեսության մեջ այս կամ այն երկրի շահեկան դիրքավորումն ու կայուն զարգացումը: Այս տեսակետից բացառություն չէ նաև նորանկախ Հայաստանի Հանրապետությունը: ՀՀ տնտեսության երեք տասնամյակ տևած բարեփոխումների գլխավոր նպատակներից մեկը այս իմաստով երկրի մրցունակության բարելավումն է ու դրա հիման վրա ժողովրդի բարեկեցության ու արժանապատիվ գոյության ապահովումը: Պատահական չէ, որ երկրի մրցունակության և մրցակցային դիրքերի ամրապնդման հիմնահարցերը հույժ կարևոր են ինչպես գիտնական-հետազոտողների, փորձագետների, այնպես էլ տնտեսական քաղաքականությանը վերաբերող որոշումներ կայացնողների գործունեության մեջ:

Հատկապես ետխորհրդային տնտեսություններ ունեցող երկրները, այդ թվում Հայաստանի Հանրապետությունը, ազատական ու շուկայական բարեփոխումների իրենց քաղաքականության մեջ շարունակաբար բախվել են լուրջ հիմնախնդիրների ու դրանց արդյունքների տեսակետից ոչ միանշանակ արդյունքներ ունեն: Շատ դեպքերում ետխորհրդային երկրները, այդ թվում՝ ՀՀ-ն, իրենց մրցունակության խնդրների լուծման

հեռանկարը դիտարկել են այս կամ ինտեգրացիոն կազմավորման մեջ ներվրավվելու մեջ: Ուստի մրցունակության վիճակին ու դրանց բարելավման խնդիրներին հետազոտողների շարունակական անդրադարձը միանգամայն արդարացված է ու տրամաբանական: Այս տեսակտից գրախոսման ներկայացված անտենախոսության շրջանակներում ընտրված թեման **արդիական է**: Ակնհայտ է, որ ՀՀ տնտեսության համար, չնայած տասնամյակներ տևած մի քանի սերնդի բարեփոխումներին, ներդրված շարունական ջանքերին և ռեսուրսներին, պատշաճ մրցունակության ապահովման խնդիրը վերստին մնում է խիստ հրատապ ու պահանջում է հավելյալ ուսումնասիրություններ և ընդհանրացումներ: Ատենախոսի կողմից կատարված սույն աշխատանքը այդօրինակ մի փորձ է:

Ատենախոսության շրջանակներում կատարված **հետազոտական նպատակադրումները և գիտական խնդրադրումները** միտված են ՀՀ տնտեսության մրցունակության առանձնահատկությունների ու պայմանների բացահայտմանը, ՀՀ տնտեսության մրցակցային առավելությունների ձևավորման հիմնախնդիրների վերլուծությանը, ինչպես նաև ՀՀ տնտեսության մրցունակության բարելավման ուղիների վերաբերյալ առաջարկների ներկայացմանը: Այդ նպատակների իրացմանը հետամուտ ատենախոսը դիտարկել ու վերլուծել է համապատասխան խնդիրներ, որոնք բխում են ՀՀ տնտեսության մրցունակությունը ձևավորող հիմնական որոշիչների բովանդակությունից: Մասնավորապես, այդ համատեքստում ուսումնասիրվել են ազգային տնտեսության մրցունակության գնահատման տեսամեթոդական մոտեցումները, բացահայտվել մրցունակության հասկացության տարաբնույթ ուղղությունները և առանձնահատկությունները, տնտեսության մրցակցային առավելությունների ձևավորման գործոնները, բնորոշել դրանց փոխադարձ կապը և ազդեցությունը մրցունակության մակարդակի վրա, դիտարկել ազգային տնտեսության մրցունակության և տնտեսական ինտեգրացիայի փոխկապակցվածությունը և այլն:

Աշխատանքի **առաջին գլխում** հեղինակը հանգամանալի անդրադարձ է կատարել միջազգային մրցունակության տեսամեթոդական հիմքերին, կատարել ազգային տնտեսության մրցունակության մակարդակի վրա առանձին գործոնների ազդեցության վերլուծություն: Ուշագրավ է հեղինակի կարողությունը և ձգտումը՝ դիտարկվող

մեթոդաբանական հիմնավորումներն ու հետևությունները խարսխել տնտեսամաթեմատիկան հաշվարկների և մոդելների եզրահանգումների վրա:

Աշխատանքի **երկրորդ գլուխը**, որ նվիրված է ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրների մրցունակության ներուժի վրա տարածաշրջանային ինտեգրացիայի ազդեցության վերլուծությանը, հեղինակը բացահայտել Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների ազգային տնտեսությունների մրցունակության հիմնական որոշիչները, դրանց ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու մարտահրավերները: Կարելի է, թեևս, համաձայնել հեղինակի այն պնդման հետ, ըստ որի՝ ԵԱՏՄ երկրները իրենց մրցունակության ներուժն իրացնում են ոչ լիարժեք կերպով, ընդ որում՝ «Հայաստանի և Ղազախստանի մրցունակության ներուժը ձևավորվում է՝ ի հաշիվ արտաքին ֆինանսական հոսքերի և ներմուծվող ապրանքային հոսքերի: Ղրղզստանի և Բելառուսի մրցունակության ներուժը բնորոշվում է առևտրի դիվերսիֆիկացվածությամբ: Ռուսաստանի դեպքում մրցունակության ներուժի համար բնութագրական է առևտրի կենտրոնացվածությունն ու դիվերսիֆիկացիան, արժութային փոխարժեքի տատանողականությունը, ներքին շուկայի փակվածությունը» (էջ՝ 86):

Աշխատանքի **երրորդ գլխում** շարադրված են միջազգային մրցունակության բարելավման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում: Ամփոփ գնահատմամբ՝ կարելի է համաձայնել հեղինակի կողմից երկրի տնտեսության մրցունակության բարելաման համալիր մոտեցման հետ, ըստ որի մրցունակության մակարդակի բարձրացման գլխավոր սկզբունքը պետք է ներառի՝ «մրցունակության բոլոր մակարդակներում՝ կազմակերպությունների, ճյուղերի և ազգային տնտեսության գործունեության արդյունավետության և արտադրողականության շարունակական աճի ապահովումը՝ ի հաշիվ նորարարությունների մշակման և ներդրման, ինստիտուցիոնալ կարողությունների և մարդկային կապիտալի զարգացացման, ենթակառուցվածքների զարգացման և արտահանման ուղղվածություն ունեցող արտադրության խթանման» (էջ՝ 144):

Ընդհանուր առմամբ հեղինակը կատարել է ինքնուրույն, հիմնավոր, տրամաբանական կապի մեջ շարադրված համակարգային վերլուծություն, որը

պարունակում է գիտական նորույթի տարրեր, որոնք կարող են ունենալ ոչ միայն տեսամեթոդական և ուսումնաօժանդակ կիրառություն հետազոտողների, ակադեմիական շրջանակների ու դասավանդողների համար, այլև գործնականորեն օգտագործվել ինչպես պետական մակարդակով տնտեսական քաղաքականություն մշակողների և որոշում ընդունողների, այնպես էլ բիզնես և կորպորատիվ շրջանակների կողմից՝ գործարար որոշումներ կայացնողների համար: Մասնավորապես, հետազոտության շրջանակներում առաջարկված գնահատման մեթոդը՝ ընդհանրական համաթիվը կարող է օգտակար գործիք լինել հետազոտողների համար՝ երկրների իրավիճակային և համեմատական վերլուծություն իրականացնելու նպատակով:

Վերը շարադրվածով հանդերձ, ցանկանում եմ նշել, նաև, որ աշխատանքը զերծ չէ առանձին **թերություններից և բացթողումներից**: Դրանցից առանձնացնեմ հետևյալը.

1. Թերևս վիճելի է հեղինակի կողմից «մրցունակություն» հասկացության բնորոշումը, ըստ որի՝ «մրցունակությունը երկրի ունակությունն է՝ ձևավորելու քաղաքական, սոցիալ-տնտեսական, ֆինանսական ինստիտուտների համակարգված համախումբ, որն անհրաժեշտ է տարածաշրջանային և համաշխարհային շուկաներում մրցակցային ֆինանսական, ներդրումային, առևտրային, նորարարական ներուժի ձևավորման և իրացման համար՝ նպաստելով տնտեսության զարգացմանը և երկրի բնակչության կյանքի որակի բարելավմանը (էջ՝ 146)»: Արդյոք այսպիսի բնորոշումը շատ չի՞ բարդացնում մրցունակության պատշաճ մակարդակի ձևավորման խնդիրը, այն դարձնելով խիստ ժամանակատար, ծախսատար և, ինչ-որ տեղ՝ տեսանելի ապագայում անհասանելի խնդիր:
2. Լավ կլիներ, որ հեղինակը առավել առարկայական անդրադարձ կատարեր այն խնդիրներին, որոնք կապված են եվրասիական տնտեսական միության կազմավորման ընթացքում ծագած այն խնդիրներին, որոնք ավելի շուտ ոչ թե նպաստում, այլ խանգարում են անդամ երկրների տնտեսությունների մրցունակության բարձրացմանը: Դա վերաբերում է առաջին հերթին ինտեգրացիոն միավորման ստեղծման պայմանագրահենքով նախատեսված ընդհանուր շուկաների, մասնավորապես՝ էլեկտրաէներգետիկական և գազային

շուկաների միասնականացման խնդիրներին: Գաղտնիք չէ, որ հատկապես գազի և էլեկտրաէներգիայի խիստ տարբերվող (նույնիսկ՝ անգամներով) սակագներով աշխատող ազգային արտադրողները չեն կարող մրցունակության քիչ թե շատ համադրելի պայմանների մեջ լինել, հետևաբար և մրցունակ լինել նույնիսկ ինտեգրացիոն կազմավորման շուկաներում: Խոսքը հատկապես վերաբերում է էներգատար արտադրություններին:

3. Աշխատանքը զերծ չէ նաև տեխնիկական, խմբագրական, սրբագրական բնույթի վրիպումներից և բարեփոխումներից: Այսպես, աշխատանքում կան ոչ պատշաճ հղումներ, երբ հղման մեջ նշված չէ աղբյուրի կոնկրետ էջը (օրինակ էջ՝ 11, 13, 16, 64 և այլն) , էջ 71-ում զետեղված աղյուսակը թերի է վերնագրված: Աշխատանքում նկատվում են նաև որոշակի ոչ կոռեկտ նույնաբանություններ. օրինակ՝ «մրցունակությունը մրցունակության ներուժի արդունավետ իրացումն է» (էջ՝ 64):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Չնայած նկատված առանձին թերություններին և բացթողումներին, որոնք մասնակի բնույթ են կրում, Արփինե Դավիթի Սարգսյանի «ՀՀ տնտեսության մրցունակության բարելավման հիմնախնդիրները ինտեգրացիոն գործընթացների պայմաններում» թեմայով ատենախոսությունը, ինչպես նաև՝ սեղմագիրը բավարարում են ՀՀ ԲՈԿ-ի կողմից Ը.00.01.- «Տնտեսագիտության տեսություն և տնտեսագիտական մտքի պատմություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի որակավորման պահանջներին: Ատենախոսության հիմքում ընկած գիտական հրապարակումները ամբողջությամբ արտացոլված են աշխատանքում:

Ընդհանուր առմամբ Արփինե Դավիթի Սարգսյանի «ՀՀ տնտեսության մրցունակության բարելավման հիմնախնդիրները ինտեգրացիոն գործընթացների պայմաններում» թեմայով ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի «Հայաստանի Հանրապետության» գիտական աստիճանաշնորհման

պահանջներին իսկ դրա հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՊՏՀ «Ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտություններ»
գիտաուսումնական լաբորատորիայի ղեկավար,
տ.գ.թ. , դոցենտ
06.04.2021թ

Ա.Շ.Մարգարյան

Տնտեսագիտության թեկնածու
դոցենտ Ատոմ Շավարշի Մարգարյանի ստորագրությունը
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՀՊՏՀ գիտքարտուղար Նաիրա Դարբինյան